



ԴՎԲ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿԲ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԱԳ	Սպառողական գների ինդեքս, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրեյաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրեյաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տատանում ունեցող բաղադրիչներ

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղյա, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ


ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19

Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Դ.Տերյան


(010) 591 525, (010) 591 526

ՀՀ Կենտրոնական բանկի տոկոսադրույքներ , աղբյուր՝ cba.am		
Դրամական միջոցների ներգրավման	Լոմբարդային ռեպո	Վերաֆինանսավորման
4.5	7.5	6.0


ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդներ և տրամադրված վարկեր / 2013-2018թթ., մլրդ ՀՀ դրամ/




Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքներ (1 տարուց ավելի), %



Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներ (1 տարուց ավելի), %




ՀՀ պետական պարտք / 2000-2018թթ. / մլրդ. ԱՄՆ դոլար/ աղբյուրը՝ www.minfin.am




ՀՀ հիմնական տնտեսական ցուցանիշներ


ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերում գրանցված աճի դինամիկան 2018թ, % (YoY) /աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ/




ՀՀ ՍԳԻ, 2017-2018թթ, % /աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ/



ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշներ. 2017թ հկ. - 2018թ հկ. (YoY), մլն ԱՄՆ դոլար / աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ



2017թ./Հվ 2018թ./Հվ



ՀՆԱ			
, աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ	մլն. ՀՀ դրամ	նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%)	նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ (%)
I եռամսյակ	1113049.4	109.7	61.1
II եռամսյակ	1362036.7	107.5	121.9
III եռամսյակ	1676535.3	102.7	129.5

Ցուցանիշ , աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ	2018թ հկ.	2018թ հկ. - 2017թ հկ. (%) աճ	2018թ հվ-հկ.	2018թ հվ-հկ - 2017թ հվ-հկ. (%) աճ
Արդյունաբերական արտադրանք, մլրդ դրամ	164	8.1	1,408.8	4.5
Գյուղատնտեսական արտադրանք, մլրդ դրամ	127.4	-21.7	747.3	-7.9
Շինարարության ծավալ, մլրդ դրամ	42.8	0.4	288.8	6.5
Առևտրաշրջանառություն, մլրդ դրամ	258.8	5.8	2,308.8	9.6
Ծառայությունների ծավալ, մլրդ դրամ	169.3	16.6	1,426.8	18.5
Տնտեսական ակտիվության ցուցանիշ, %	X	3.0	X	6.0
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	122.9	-	994.1	-
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	142.8	-	1,121.2	-
Սալդո (+/-), մլրդ դրամ	-19.8	-	-127	-
Արտաքին առևտրաշրջ., մլն ԱՄՆ դոլար	683.8	11.4	6,022	22.4
արտահանում	229.3	12.1	2,004	11.6
ներմուծում	454.5	11	4,018	28.6
Սալդո (+/-), մլն դոլար	-225.2	-	-2,014	-
ՀՀ պետական պարտք, մլն ԱՄՆ դոլար	6.72	7.0	X	X
Արտաքին պարտք	5.39	6.7	X	X
Ներքին պարտք	1.34	7.3	X	X

ՍԳԻ

2018թ. նոյեմբեր ամսին 12-ամսյա գնաճի՝ նախորդ ամսվա 12-ամսյա ցուցանիշի համեմատ անկումը շարունակվել է՝ կազմելով 1.8%: Գնաճի նման ցուցանիշը պայմանավորված է եղել և՛ սպառման ապրանքների, և՛ ծառայությունների գնաճի տեմպերի թուլացմամբ: Սպառման ապրանքների գնաճը կազմել է 2.4%, այդ թվում սննդամթերքի և ոչ ակոհոլային խմիչքների գնաճը կազմել է 1.7%, իսկ ոչ պարենային ապրանքներինը՝ 3.7%: Ծառայությունների սակագների 12-ամսյա ինդեքսը կազմել է 0.7%:

ՍԳԻ-ն նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ աճել է՝ 0.1%-ից դառնալով 1.0 %: Գնաճի նման ցուցանիշը պայմանավորված է եղել սննդամթերքի և ոչ ակոհոլային խմիչքների 2.0% և ծառայությունների 0.2% գնաճով: Սպառման ապրանքների գնաճը հոկտեմբերի համեմատ կազմել է 1.4%: Անկում է նկատվել միայն ոչ պարենային ապրանքների ամսական գնաճի ցուցանիշում՝ կազմելով 0.4%:

Արտահանում և ներմուծում

Տարեկան կտրվածքով աճել են դեպի ԵՄ, ԱՊՀ, այդ թվում ԵԱՏՄ երկրներ արտահանման ծավալները: Արտահանման կառուցվածքում 2018թ. հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվել է այլ երկրների արտահանման մասնաբաժինը, մասնավորապես Չինաստան, Վրաստան, ԱՄՆ, ԱՄԷ:

2018թ. հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվել են ԱՊՀ երկրներից, այդ թվում ԵԱՏՄ-ից ներմուծման ծավալները: Աճել են ԵՄ-ից և այլ երկրներից ներմուծման ծավալները:

Ավանդներ և վարկեր

2018թ. ապրիլին նկատվել է և՛ դրամով, և՛ արտարժույթով ավանդների ծավալների անկում, սակայն արդեն մայիսից ցուցանիշները վերականգնվել են և շարունակաբար աճել: Հոկտեմբերին ավանդների ընդհանուր ծավալը կազմել է 2,852,423 մլն դրամ, որի 39.1%-ը բաժին է ընկնում դրամով, իսկ 60.9%-ը՝ արտարժույթով ավանդներին:

2018թ. ընթացքում թե՛ դրամով և թե՛ արտարժույթով տրամադրած վարկերի ծավալները աճել են: Հոկտեմբերին վարկերի ընդհանուր ծավալը կազմել է 3,022,138 մլն դրամ, որի 42.2%-ը բաժին է ընկնում դրամով, իսկ 57.8%-ը արտարժույթով վարկերին:

2018թ. հոկտեմբերի դրությամբ տարեկան կտրվածքով աճել են շինարարության, արդյունաբերության, սպառողական, հիպոթեքային, սպասարկման վարկերը, անկում են գրանցել առևտրի, տրանսպորտի և կապի, գյուղատնտեսության և այլ վարկերը:

Միջազգային ֆինանսական շուկա

Հիմնական Մակրոտնտեսական ցուցանիշներ	ԱՄՆ			ԵՄ			Մեծ Բրիտանիա			ՌԴ		
	Վերջին տվյալ		Նախորդ	Վերջին տ.		Նախ.	Վերջին տ.		Նախ.	Վերջին տ.		Նախ.
Իրական հատված												
ՀՆԱ աճ (եռամսյակային՝ ՉՕՉ)	3եռ	3.4%*	4.2%	3եռ	0.2%	0.4%	3եռ	0.6%	0.4%			
ՀՆԱ աճ (տարեկան՝ YoY)	2եռ	2.8%	2.6%	3եռ	1.6%	2.1%	3եռ	1.5%	1.2%	3եռ	1.5%	1.3%
Աշխատանքի շուկա												
Գործազրկության մակարդակ	Նյ	3.7%	3,9%	Հկ	8.1%	8.2%	Հկ	4.1%	4.0%	Նյ	4.8%	4.7%
Գնաճ												
ՍԳԻ (ամսական՝ MoM)	Նյ	0.0%	0.3%	Նյ	-0.2%	0.2%	Նյ	0.2%	0.1%	Հկ	0.4%	0.2%
ՍԳԻ (տարեկան՝ YoY)	Նյ	2.2%	2.5%	Նյ	1.9%	2%	Նյ	2.3%	2.4%	Նյ	3.8%	3.5%
Core ՍԳԻ (ամսական՝ MoM)	Նյ	0.2%	0.1%	Նյ	-0.3%	-0.2%						
Core ՍԳԻ (տարեկան՝ YoY)	Նյ	2.2%	2.1%	Նյ	1%	1%	Նյ	1.8%	1.9%			
Առևտուր/սպառում												
Մանրածախ առևտուր (ամսական՝ MoM)	Նյ	0.2%	1.1%*	Հկ	0.3%	-0.5%	Նյ	1.4%	-0.4%*			
Մանրածախ առևտուր (տարեկան՝ YoY)				Հկ	1.7%	0.3%*	Նյ	3.6%	2.4%*	Հկ	2.3%	2.8%
Արտաքին հատված												
Առևտրային հաշվեկշիռ (մլրդ ԱՄՆ դոլար/եվրո/ֆունտ/ռուբլի)	Հկ	-55.5	-53.3*	Հկ	14%	13.1%	Հկ	-11.87	-10.68	Հկ	19.7	18.49
Տոկոսադրույքներ												
Վերաֆինանսավորման %	Դկ	2.25%-2.5%	2%-2.25%	Դկ	0.0%	0.0%	Դկ	0.75%	0.50%	Դկ	7.75%	7.5%
Ավանդադրման %				Դկ	-0.4%	-0.4%						

* - Ցուցանիշի վերանայում բացասական ուղղությամբ,

* - ցուցանիշի վերանայում դրական ուղղությամբ,

* - նախնական տվյալ:

ԱՄՆ տնտեսության վրա արդեն նկատելի են առևտրային պատերազմի բացասական հետևանքները.

- ✓ Վերամշակող արդյունաբերության արտադրանքի ծավալները նոյեմբեր ամսին մնացել են անփոփոխ՝ չնայած, որ կանխատեսվում էր 0.3% աճ (վերջինս կազմում է ընդհանուր արդյունաբերության մոտ 75%-ը և ԱՄՆ ՀՆԱ-ի 12%-ը).
- ✓ Մանրածախ առևտրի ծավալները նոյեմբերին աճել են ընդամենը 0,2%-ով նախորդ ամսվա 1,1% աճից հետո.

- ✓ Վերամշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում նվազել է գործարար ակտիվությունը (PMI ինդեքսները կազմել են համապատասխանաբար 53.9 և 53.4՝ նախորդ ամսվա 55.3 և 54.7 գործակիցների փոխարեն)։
- ✓ ԱՄՆ 2 տարի ժամկետայնությամբ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը գերազանցել է 5 տարի ժամկետայնությամբ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը (ընդ որում՝ սփրեդը շարունակում է աճել), ինչը խոսում է առաջիկայում ռեցեսիայի մեծ հավանականության մասին։

Դեկտեմբերյան նիստում ԱՄՆ ՖԴՀ-ն 0,25 կետով բարձրացրեց ԴՎՔ բազային տոկոսադրույքը՝ վերջինս սահմանափակվելով 2.25% - 2.5% միջակայքում։

Դեկտեմբերի 14-ին ՌԴ ԿԲ-ն բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը 25 բազիսային կետով և հայտարարեց 2019թ. հունվարի 15-ից արտարժույթի գնումները վերսկսելու մասին։

- ✓ Գնաճը ՌԴ-ում նոյեմբեր ամսին կազմել է 3.8% նախորդ ամսվա 3.5%-ի փոխարեն։
- ✓ ՌԴ ԿԲ կանխատեսումների համաձայն 2018թ. տարեկան գնաճը կկազմի 4% (նպատակային ցուցանիշ), իսկ 2019թ կտատանվի 5% -5.5% միջակայքում։
- ✓ Ինֆլյացիոն սպասումներն աճել են՝ հիմնականում պայմանավորված 2019թ հունվարի 1-ից ՌԴ-ում ԱԱՀ դրույքաչափի բարձրացման սպասումներով։

Ֆինանսական շուկայի մասնակիցների շրջանում նվազել է ռիսկի նկատմամբ հակվածությունը։

- ✓ Չինաստանում արդյունաբերական արտադրանքի ծավալները նոյեմբեր ամսին տարեկան կտրվածքով գրանցել են ընդամենը 5.4% աճ՝ նախորդ ամսվա 5.9% աճից հետո։
- ✓ Մանրաձախ առևտուրը Չինաստանում նոյեմբեր ամսին 2017թ. նոյեմբերի համեմատ աճել է 8.1%-ով այն դեպքում, երբ կանխատեսվում էր 8.8% աճ, իսկ նախորդ ամիս աճը կազմել էր 8.6%։
- ✓ Նման պայմաններում աճեցին համաշխարհային տնտեսության աճի հետ կապված մտավախությունները և ֆինանսական շուկայի մասնակիցների շրջանում նվազեց ռիսկի նկատմամբ հակվածությունը՝ հանգեցնելով ֆոնդային շուկաներում անկումների։
- ✓ Նոյեմբեր ամսվա ընթացքում նվազել է ԱՄՆ և ԵՄ արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում գործարար ակտիվությունը (ԵՄ-ում արդյունաբերության և ծառայությունների ոլորտների գործարար ակտիվության բաղադրյալ PMI ինդեքսը նվազում է արդեն 4-րդ ամիսն անընդմեջ՝ նոյեմբերին հասնելով 51.3 գործակցի)։

ԵԿԲ-ն դեկտեմբերյան նիստում անփոփոխ թողեց դրամավարկային քաղաքականության բազային տոկոսադրույքները՝

- ✓ Վերաֆինանսավորման տոկոսադրույք՝ 0. 0%,
- ✓ Ավանդադրման տոկոսադրույք՝ -0. 4%:
- ✓ Նախատեսվում է քանակական մեղմացման ծրագրի (QE) շրջանակներում ակտիվների գնումների դադարեցում՝ 2019թ. հունվարից: